

# ՊԱՏՄԱ-ԲԱՆԱԿՍԻՐԱԿԱՆ

ԹՐՈՅ. 1. ՍԵՄՅՈՒՆՈՎ.

## ԼՈՒՍԱ-ԱՐԵԿԱԳՆԱՅԻՆ ԽԱՎԱՐՈՒՄՆԵՐ

(բ. մաս)



ամանակագրական կարգով  
խավարումների մասին հետեւ-  
յալ ուշադրովիքան արժանի աշ-  
խատանք է հանդիսանում  
Պետրոս Ապիանի «Cosmographia Seu  
descriptio totius orbis» աշխատովիքան  
թարգմանությունը, որը կատարված է Հայ-  
կական 1070 թվին, այսինքն՝ 1621 թվ.:  
Թարգմանությունը կատարել է Հովհան Ան-  
կուրացին:

Ինչպես Հայտնի է, Պ. Ապիանը (1495—  
1552) աշխատել է Բավարիայի Ինգոլշտադտ  
քաղաքում որպես մաթեմատիկայի և աստղա-  
բաշխության պրոֆեսոր և իր վերև հիշված  
աշխատովիյունը լուս ընծայել 1524 թվին:  
Որբան մեծ պիտի լիներ հայ ժողովրդի մոտ  
սերը դեպի գիտությունը, որպեսզի թյուքքա-  
կան հորդաների կողմից ավերված երկրում,  
անհրաժեշտ համարեն լատիներենից հա-  
յերենի թարգմանել գիտական տեսակետից իր  
ժամանակի համար կարենոր այդ աշխատու-  
թյունը: Թարգմանությունը թեև կատարված  
է ո՞չ այնքան հստակ և գեղեցիկ լիզվով,  
բայց իլլուստրացիայի է ենթարկված շատ  
դունեղ ու շարժական քարտեզներով, որոնք  
աստղաբաշխական տերմինների իմաստը  
բացատրելու տեսակետից խիստ կարեռ են:

Սակայն պիտի ընդդեմ, որ Պ. Ապիանի  
աշխատությունը, մեզ հետաքրքրող հարցի  
վերաբերյալ, համարյա թե ոչինչն չի տալիս:  
Նրա աստղաբաշխական դրույթները վաղուց  
հայտնի էին հայ աստղաբաշխներին: Նա եր-  
րորդ հատվածի վերջում տալիս է չորս գծա-  
զիր, որոնց օգնությամբ ցանկանում է հա-  
մոզիլ, որ երկիրն անպայման պիտի լինի  
զնդանե, քանի որ լուսնի խավարման ժա-  
մանակ նրան ծածկող ստվերը շրջանաձե է:

Ավելի հետաքրքիր է գիտական տեսակե-  
տից աստղաբաշխական մի ուրիշ տեքստ  
(ընդօրինակված ՀՍՍՌ Մատենագրանի  
№ 6895 ձեռագրում), ուր հեղինակը գիտա-  
կանորեն բացատրում է խավարմաների հար-  
ցը: Մեր կարծիքով, այդ աշխատությունը  
պիտք է գրված լինի կամ 17-րդ դարու վեր-  
ջը բարում կամ էլ 18-րդ դարի սկզբներում:  
Նկատի ունենալով, որ այդ աշխատովիքան  
մեջ հարցը դրված է գիտական տեսակետից  
շատ օրիգինալ կերպով, ուստի և թույլ ենք  
տալիս մեզ այստեղ բերել մի գլուխը տեքս-  
տից և տալ մեր մեկնաբանությունը:

### 1. «Յաղագս խաւարման արեգական»:

Կանոն հասարակօրէն այսպէս արա: Եթէ  
կամիցի որ հարցանել թէ՝ այս նիշ թուին  
տաճկաց այս նիշ ամսոյ վերջն լինի խաւա-  
րման արեգական թէ ոչ: Ցայնժամ կալ ի  
տաճկաց 1112 թուէն, և Շապան ամսոյ  
սկզբէն մինչև ցայն հարցած ամսոյ վերջն,  
և տես թէ որքան ամիսք են, առ զայնքան  
ամսոյ թիւքն՝ հետ այս 7361 թուոյս զարպ  
արա: Եվ յայս զարպէս ելեալ թիւքն՝ հետ  
այս 33,890 թուոյս ճէմ արա: Դարձեալ  
զայն ճէմս հետ այս 43200 թուոյս թաքսիմ  
արա և տես թէ յայս թաքսիմէս յամենեալ  
թիւն քան զ4060 թիւն որ պակաս է՝ խաւա-  
րում է արեգականն և թէ աւելի է, զայս ա-  
ւելեալ թիւն անգամ մի ևս ի 43200 թուոյս  
պակսեցու և կրկին տես թէ յամենեալ թիւն  
քան զայս 4060 թիւն ևս որ աւելի է, գի-  
տացիր՝ որ այն հարցեալ ամսոյ վերջն ոչ  
լինի խաւարումն արեգական: Բայց թէ այս  
երկու աւելորդաց թուոցս մինն որ ի 4060  
թուոյս պակաս գալ, յիրափ, այն հարցնել  
ամսոյ վերջն ի մտանիլ լուանոյն ի ներքոյ

արեգական թէ ի հարաւակողմէն և թէ հիւսակողմէն, և թէ ի հողային գնդի սրտէն, ծննդեան ժամուն և մասին խաւարի արեգական: Եւ որքան աւելի և պակաս բերէ թիւն, այնքան մեծ և փոքր լինի խաւարումն: Օրինակ մի քեզ, ի թուին 1112-էն ի շապան ամսոյ սկզբէն, մինչ ի 1162 թիւն ի զիւցէնքէի վերջն 605 ամսոք էին: Զայս 605 թիւս հետ այս 7361 թուոյս զարպ արաք. այս ելաւ 4,453,405. զայս ելեալ թիւս հետ այս 33,890 թուոյս ճէմ արաք, այս ելաւ 4,487,295, զայս ելեալ ճէմն՝ հետ այս 43200 թուոյս թափսիմ արաք, 37,695 թիւյաւելաւ ի թափսիմէն: Մեսաք որ քան զ4060 թիւն ավելի է, ասացաք թէ՝ ոչ որյ խաւարումն, որ և ոչ եղեւ եւ թէ այս 4060 թուոյս պակասն զայր ի զիւցէնքէի վերջն լինէր խաւարում: Բայց զայս թափսիմէն յաւելեալ 37,695 թիւս: Անգամ մի ևս հանեցաք ի 43,200 թուոյս ելաւ 5,505, որ է կրկին աւելի, քան զ4060 թիւս, ասացաք ոչ որյ խաւարումն, և թէ պակաս զայր՝ լիներց էր:

## 2. Յաղագս խավարման լուսնիք:

Կալ 1112 էն և Շապան ամսոյ սկզբէն մինչ ի հարցեալ ամսոյ սկիզբն, թէ որքան ամհսոք էն, զայնքան ամսոյ թիւկն հետ այս 7361 թուոյս զարպ արաք, և յայս զարպէն ելեալն՝ հետ այս 37,326 թուոյս ճէմ արաք. և զայս ելեալ ճէմն հետ այս 43,200 թուոյս թափսիմ արաք, և մես թէ թափսիմէն յաւելեալն քան զայս 2,800 թուոյս որ թէ պակաս է, այն հա(ր)ցել ամսուն լրման լուսնի ժամուն և մասին ընդ արեգական խաւարումն է լուսնոյ: Եւ թէ աւելի գայ, զայս աւելեալ թիւն անգամ մի ևս յայս 43,200 թուոյս պակասեցո և կրկին մես թէ յաւելեալ թիւն քան զայս 2800 թուոյս թէ որ պակաս գայ, առանց կարծեաց խաւարումն լուսնի լինելոց է: Եվ մես թէ որքան աւելի կամ պակաս զայ թիւն, այնքան մեծ կամ փոքր լինելոց է խաւարումն լուսնի: Եւ այս է:

Բայց թէ խաւարումն արեգական ժամն ի տիւն պատահի, ընդ երկրիս, երկի մեզ, իսկ թէ զիշերն երկի ենթերկրի և ոչ մեզ:

Անդրադարձօրէն լուսնոյ խաւարման ժամըն թէ ի զիշերի պատահի, երկի մեզ և թէ ի տիւն երկի ենթերկրաւ և ո՞չ մեզ, զի արեգակն ի լուսնոյ ծննդեան ժամն խաւարի և լուսինն՝ ի լրման ժամն: 613 ամի և 5 ամսոյ ամսաթիւն է՝ 7361: (№ 6895, թ. 76 ա—բ):

Շանոր. 1) զարպ արա— կատարիր բազմապատկում

2) ճէմ արա— կատարիր գումարում

3) թափսիմ արա— կատարիր բաժանում

4) յաւելեալ— մնացորդ:

Կանգ չենք առնում այն հանգամանքի վրա, որ հեղինակը ճիշտ տվել է աստղաբաշխորեն անհրաժեշտ պայմանները այս կամ այն տիպի խավարման համար: Այս հոդվածում մենք կաշխատենք մեկնաբանել հեղինակի կողմից բերված թիւրի նշանակությունը և իմաստը:

Նրա բոլոր ասածը կարելի է պատկերացնել մի մաթեմատիկական հավասարումով. 7361.  $N = 43.200 \cdot m + m_{\text{ա}} g$ . ուր ո—ամիսների քանակն է սկսած 1112 թվ. շապան ամսի սկզբից:

$N = m$  գումարելի, որը ավելացվում է արտադրյալին և որ հավասար է 33.800՝ արեգակնային խավարման դեպքում և 37.326-ի լուսնային խավարման դեպքում: ո—արտադրյալի 43.200-ի վրա բաժանման քանորդը:

կ—մնացորդը: Որպեսզի լուրաքանչյուր անգամ չկրկնել— այդ մնացորդը արեգակնային խավարման դեպքում պիտի լինի  $C \leq 4060$ , իսկ լուսնի խավարման դեպքում՝  $C \leq 2800$ :

Սակայն  $7361 = 223.33 + 2$ , որտեղ 223 լուսնի սինոդիկ ամիսների քանակն է մի «սարուսի» ընթացքում, բայց ինչպես ցուց են սալիս թվական տվյալները, հեղինակը տվյալ դեպքում օգտվում է մի ժամանակաշրջանով, որն ավելի մեծ է (երկար է) սարուսից և նրանից ավելի մեծ ճշտություն ունեցող խավարումների ժամանակաշրջան:

Որպեսզի նյութին անծանոթ ընթերցողին պարզ ու հասկանալի լինի, մենք համառուտ կերպով կհիշեցնենք թե ինչ բան է սարուսը:

ա) Լուսնի 242 դրակոն. (վիշտապային) ամիսների տևողությունը հավասար է 6585,357 օրվա,

բ) 19 վիշտապային տարիների տևողությունը հավասար է 6585,780 օրվա,

գ) 223 լուսնի սինոդիկային ամիսների տևողությունը հավասար է 6585,3212 օրվա!

Մենք տեսնում ենք, որ այդ երեք ժամանակաշրջանները համարյա թե հավասար են իրար: Այդ ժամանակամիջոցը ընդգրկում է բոլոր պայմանները, որոնք անհրաժեշտ են

1. Լուսնի նկատմամբ աստղաբաշխները հաշվում են մի քանի տեսակի ամիսներ՝ ա) սինոդիկային— տևողությամբ՝ 29,53059 օրվա, բ) վիշտապային— տևողությամբ՝ 27,2122 օրվա, գ) աստղային կամ սիդրոիկ— տևողությամբ՝ 27,32166 օրվա և այն: Առաջինը ցույց է տալիս այն ժամանակամիջոցը, որի ընթացքում լուսին անցնում է նորալուսնից նորալուսին, երկրորդ՝ հանգուցակետից մինչև նույն հանգուցակետը, երրորդը՝ երր նա կատարում է մի լրիվ պտույտ (360) երկրի շուրջը:

լուսնա-արեգակնային խավարումների համար, Վիշտապային ամիսները (տարիները) գալիս են ասելու, որ լուսինը գտնվում է Հանգուցագծի վրա (ուրիշ խոսքերով՝ վիշտապայի գլխի կամ տիփ մոտ), իսկ սինոդիկալիները՝ որ նա գտնվում է նորալուսնի կամ թալուսնի փուլում—պայմաններ, որոնք անձրաժեշտ են և բավարար, որպեսզի տեղի ունենա լուսնի կամ արեգակի խավարում։ Այդ ժամանակաշրջանը հայտնի է դարձել մարդկությանը մոտ 1,5 հազար տարի մեր թվարկ։ առաջ և նա անվանվել է սարու։ Մի սարուի ընթացքում (18 տարի 10 կամ  $11\frac{1}{3}$  օրվա) սեղի են ունենում մոտ 70 խավարումներ, որոնցից 41 արեգակնային, իսկ 29 լուսնային։ Սակայն սարուն ունի մի թերովիտակ, այն է՝ վերև բերված երեք թվական տվյալների միջև նկատվում է փոքրիկ տարրերություն։

Ենթադրենք, որ ժամանակի մի ժումենտում տեղի ունեցավ բոլոր պայմանների համբնկրնումը, որոնք անհրաժեշտ են խավարման համար, 6585 օր անցնելուց հետո, նորից տեղի կունենա բոլոր պայմանների մուտքոր րավարարումը։ իրապես, սկզբում տեղի կունենա լուսնի համապատասխան փուլը (նորալութիւն կամ լիալուսին—6585,327 օրից հետո), հետո լուսինը կանգուցագծով (6585,357 օրից) և, վերջապես, արեգակը կանցնի նույն գծով (6585,780 օրից)։ Ոչ բարդ հաշվիները ցույց են տալիս, որ արվալ դեպքում լուսինը կգտնվի 28' ետ նախկին դրությունից։ Հաշորդ անգամ նա ետ մնացած կլինի արդեն 56' և այլն, ու, վերջապես, նա այնպես հեռու մնացած կլինի, որ արդեն այդ խավարումը տեղի չի ունենա—դրա փոխարեն կավելանա մի նորը և այլն։ Այսիսով, թեև սարուսը հնարավորովթյուն է տալիս մոտավորապես հաշվելու խավարումները, բայց և այնպես նա պարփակում է իր մեջ մի սիսալ, թեև փոքր, բայց նկատելի աստղաբաշխական տեսակետից։

Զեռագրի հեղինակը շատ հմուտ մասնակտ է այդ հարցին, որովհետև նա սարուի փոխարեն մտցնում է մի նոր ավելի երկար ժամանակաշրջան՝ տևողությամբ հավասար 7361 լուսնի սինոդիկալին ամիսների, որի ընթացքում արդեն սարուին պատկանող թերովիունները համարյա թե վերանում են։

Մենք այս հորվածում նպատակահարմար շենք գտնում կանգ առնելու հարցի մասնագիտական կողմերի վրա, բայց և այնպես պետք է նշենք, որ մեր ուշադրությունը գրավեց այն մնացորդ՝ կ կամ կ արժեքները, որը բերում է հեղինակը։

Հեղինակի բառերից կարող ենք եզրակացնել, որ առհասարակ կ=օ դեպքում լուսնի

կամ արեգակի խավարումն անպայման տեղի կունենա և որ նա պիտի լինի, ըստ տևողության, ամենամեծը։

Բայց խավարումները կարող են տեղի ունենալ և այն դեպքերում, երբ կ=օ, թեև ոչ միշտ։ Հեղինակը կ-ի համար դնում է սահմաններ։

$$k \odot \leq 4600, \text{ իսկ } k \odot \leq 2800,$$

Տեսնենք, թե ինչով են պայմանակորված կ-ի արժեքները։

Մեր հնիթագրությունը հետևյալն է։ Հեղինակը գիտենալով լուսնի սինոդիկալին ամսվա ճշգրիտ տևողությունը, բայց և այնպես որոշ հաշիվների համար նա ընդունում է այդ հավասար 30 օրվա (կլոր հաշվով), Այդ պայմանում՝  $60 \times 24 \times 30 = 43.200$ , այսինքն՝ 30 օրվա րոպեների թիվը։ Նման ենթադրության դեպքում կ և կ արժեքները ստանում են որոշ աստղաբաշխական իմաստ։ Եթե ընդունենք, որ կ=օ երբ լուսնի կենտրոնը ճշգրիտ կերպով գտնվում է հանգուցագծի վրա, առաջ կ-ի այս կամ այն արժեքը ցույց կտա լուսնի կենտրոնի հեռակորությունը հանգուցագծից։

Մեզ հայտնի է, որ խավարումները կարող են տեղի ունենալ և այն դեպքերում, երբ լուսնի կենտրոնը չի հեռացել հանգուցակետից տեսով թեսովնունով նախատեսվող մեծությունից։ կ-ի ամենամեծ արժեքները պետք է համապատասխանեն այն մունիստերին, երբ լուսնի կենտրոնը հեռու է հանգուցակետից այնքան, որ խավարումը կարող է դեռ լինել՝ թեև ամենափոքր փուլով և ամենակարծ ժամանակով։ Հեղինակն այդ սահմանային արժեքների համար ընդունում է։

$$k \odot \leq 4060 \text{ և } k \odot \leq 2800,$$

Այժմ տեսնենք, թե ուղեծրի (օրինակի) քանի աստիճանի աղեղներին են համապատասխանում կ-ի արժեքները, Կթե 43.200 համապատասխանում է 360°-ի։

ա)  $k \odot - h$  համար ստանում ենք.

$$k \odot = \frac{360^\circ \cdot 4060}{43 \cdot 200} = 33^\circ 50'$$

(ամենամեծ արժեքը):

բ)  $k \odot - h$  համար ստանում ենք.

$$k \odot = \frac{360^\circ \cdot 2800}{43 \cdot 200} = 23^\circ 20'$$

(ամենամեծ արժեքը):

Տվյալ արժեքները միանգամայն բավարար են, քանի որ խավարումների գիտական տեսովունից մեզ հայտնի է, որ ա) արեգակի խավարում (մասնակի) կարող է տեղի ունենալ այն պայմանում, երբ լուսնի լայնությունը չի գերազանցում  $1028^\circ 42'$ , երբ երկիրը ուղեծրով չի հեռացել հանգուցակե-

տից այս կամ այն կողմի վրա 160—170,  
որը ըստ ուղեծրի աղեղի կազմում է 330—  
340:

Մի քիչ այլ տվյալներ մենք ունենում ենք  
լուսնի խավարման դեպքում։ այս դեպքում  
լուսնի կենտրոնի լայնությունը շպետք է գե-  
րազանցի 0° 52', իսկ երկիրը ըստ ուղեծրի  
հեռացված լինի հանգուցակետից ավելի քան  
11,5° այս կամ այն կողմի վրա, կամ բնդա-  
մենը 230:

Հետևապես, մենք համոզվում ենք, որ հե-  
ղինակի բերած տվյալները, առանց ուղ-  
ղումների, լիովին բավարարում են և ժամա-  
նակակից աստղաբաշխության պահանջնե-  
րին։

Մենք այս հորվածում կանգ առանք մի-  
միայն մի քանի հեղինակների աշխատու-  
թյունների վրա, սկսած 7-րդ դարից մինչև  
17-րդ դարի սկիզբը։ Բացի մեր բերված հե-  
ղինակներից, կան և մի շարք ուրիշները, օ-  
րինակի համար՝ «Ֆիլոսոփի Արքսի» աշխա-  
տությունը, որը տալիս է աղյուսակ պահանջ-  
ված և պահանջվող, տարվա խավարումները  
գիտենալը (ձեռագիր № 8973), բայց այդ մեր  
կողմից լրիվ ուսումնասիրված չէ և մենք էլ  
կանգ շառանք նրա աղյուսակի վրա, ինչպես  
և մի քանի ուրիշների։

Այս փոփոքները մեր ասածները, մենք կարող  
ենք անել մի քանի եզրակացություններ։  
ա) որ խավարումների (թի' լուսնի և թի'  
արեգակի) պատճառները հայ հեղինակներին  
հայտնի էին դեռ վաղուց,

բ) որ ժամանակի ընթացքում խավարում-  
ների տեսությունը նրանց մոտ ավելի ու ա-  
վելի է ծատվել։

գ) որ եթե նրանք չեն կարող մաթեմա-  
տիկորեն տալ խավարումների տեսությունը,  
բայց և այնպես նրանք այնքան հմտութիւն  
այդ հարցում, որ նրանց էմպիրիկ (փորձից  
ստացված տվյալներով) բանաձևերը համար-  
յա թի նրանց տեսությունը դարձրել էր հա-  
մարժեք ժամանակակից աստղաբաշխության  
տվյալներին, միայն այն տարբերությամբ,  
որ նրանք չեն կարող հաշվել տեղը, որտե-  
ղից կդիտվեն լրիվ խավարումները,

դ) պիտի նաև նշել, որ հայ հեղինակնե-  
րը մեկուսացված շեն եղել հայ ժողովրդա-  
կան մասսաներից; որովհետև մեր հոդվա-  
ծում բերված տեղեկություններից շատերը  
հայտնի էին հայ գյուղացիությանը և որի  
հետեւանքով հայ գյուղացին ո՛չ մի դարում  
խավարումը չի դիմել որպես մի երևույթ,  
երբ վիշապը կլանում է լուսնին կամ արե-  
գակին։

